




ԱՇԽԱՏԱՍԵՐ ԵՐԱԺԻՇՏԻՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ժագ անունով տաղանդաւոր երիտասարդ մը կար, որ երաժշտութեան սիրահար էր: Ան ամէն օր ժամերո՛վ կը զբաղէր իր կիթառով եւ կը գրէր իր անձնական երգերը:

Սակայն ժագին ընտանիքն ու ընկերները յաճախ իրեն կ'ըսէին, որ ան պէտք է աւելի գործնական ասպարեզի մը հետեւէր, որպէսզի լաւ ապագայ մը ունենար: Բայց ժագ ինքզինք բնաւ չէր պատկերացներ, որ նուազէն զատ այլ բանով մը կրնար զբաղիլ:

Չնայած շրջապատին կասկածներուն, ժագ վճռած էր իր տաղանդը գործի վերածել: Ան սկսաւ նուազել տեղական ճաշարաններու եւ սրճարաններու մէջ: Ու շուտով ունեցաւ իր փոքր թիւով հետեւորդները: Ան իր բոլոր հնարաւորութիւնները կ'օգտագործէր, յառաջացած երաժշտութեամբ զբաղողներու հետ կապեր հաստատելու համար:

Ժագ գիտէր, որ յաջողութիւնը դիրին պիտի չ'ըլլար, բայց ան միեւնոյն ժամանակ կը հաւատար քրտնաջան աշխատանքին եւ ջանք չխնայելու հասկացողութեան՝ իր երազանքներուն հասնելու համար:



Քանի որ ժագին հեղինակութիւնը կը մեծնար, անոր առաջարկուեցաւ երկրէ-երկիր շրջագայութիւն պարտադրող գործ մը: Այսպիսի առիթ մը կեանքի մէջ քիչ կը պատահէր, բայց այս կը նշանակէր ձգել ամէն ինչ եւ ամիսներ շարունակ տարբեր երկիրներ ճամբորդել:

Ան առանց վարանելու ընդունեց առաջարկը եւ նետուեցաւ գործի: Ան առանց գանգատի կ'աշխատէր՝ ամէն գիշեր ելոյթներ ունենալով եւ իր օրերը անցընելով նոր երգեր յօրինելով ու կատարելագործելով իր արուեստը: Յոգնութեան եւ կասկածի պահեր ունեցաւ, բայց իր քրտնաջան աշխատանքը ետ կը պահէր զինք այդպիսի տատանումներէ:

Առաջին իսկ շրջագայութեան աւարտին, ժագ ձեռք բերած էր հազարաւոր նոր հետեւորդներ եւ արժէքաւոր կապեր իր ոլորտին մէջ: Ան տուն վերադարձաւ վերանորոգուած նպատակով եւ վճռականութեամբ: Ան շարունակեց աշխատիլ եւ հիմնել իր յատուկ ոճը՝ ի վերջոյ դառնալով յաջողակ երաժիշտ մը եւ հասնելով իր կեանքի երազանքին:


Վերջապէս, ան ապացուցեց, թէ ժրջան աշխատանքով ամէն ինչ կարելի է: Ան երբեք չհրաժարեցաւ իր երազանքէն, նոյնիսկ երբեմն երբ ան խոչընդոտներու եւ քննադատութեան առջեւ կը գտնուէր: Անոր փոխարէն, ան կ'օգտագործէր իր ձիրքը՝ ինքզինք յառաջ մղելու եւ յաջողութեան հասնելու համար:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵԱՆ



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը գոյներուն համաձայն:


- 1.- Կարմիր
- 2.- Կապոյտ
- 3.- Կանաչ
- 4.- Դեղին
- 5.- Վարդագոյն
- 6.- Նարնջագոյն



Քանի՞ եռանկիւն կը տեսնես պատկերին մէջ:



Իւրաքանչիւր տեսակէն քանի՞ հատ կայ: Թուէ՛ ապա արձանագրէ՛:



	<input type="text"/>		<input type="text"/>		<input type="text"/>
	<input type="text"/>		<input type="text"/>		<input type="text"/>

Կրնա՞ս լուծել:

$$\begin{aligned}
 & \text{SNACK} + \text{SNACK} = 8 \\
 & \text{Cookie} + \text{SNACK} = 10 \\
 & \text{Cookie} + \text{Popcorn} = 9 \\
 & \text{SNACK} + \text{Popcorn} = ?
 \end{aligned}$$

Հ : ղողկոստուկ

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՅՐԱՅԱՆԸ

Չինուորը յանկարծ յիշեց իր հրահանը, բայց զայն մոռցած էր պանդոկին տանիքը:

- Ա՛խ իմ կախարդական հրահանս ալ մօտս չէ, որ կարենամ փրկուիլ,- ան յուսահատութեամբ մըմըմըմըմ ինքնիրեն:

Առաւօտեան ժամը հինգին, թագաւորին ոստիկանները եկան, առին զինուորը ու տարին զայն կախելու:

Ժողովուրդը հաւաքուած էր մահապատիժը դիտելու համար:

Չինուորին յուսահատութիւնը սահման չունէր: Ի՛նչ կրնար ընել, ազատելու համար դահիճներուն ձեռքէն:

Ուրիշ միջոց չկար: Ան սկսաւ միայն աղօթել: Երբ կախաղանին հասան, մահապատիժի շապիկը հագցուցին անոր:

Յոն ներկայ էին թագաւորը, թագուհին, մեծ թիւով պալատականներ եւ հարիւր հազարաւոր մարդ:

Չինուորը խոր լռութեան մէջ յառաջացաւ դէպի կախաղան: Կարմիր հագած դահիճը մօտեցաւ անոր, չուանը անցուց վիզին եւ հարցուց.

- Ո՛վ մահապարտ, թագաւորին բարի կարգադրութեամբ վերջին փափաքիդ գոհացում պիտի տրուի:

Յանկարծ զինուորին մտքին մէջ լոյս մը ծագեցաւ եւ առանց վարանելու ըսաւ.

- Վերջին անգամ ըլլալով, կ'ուզեմ ծխամորճ մը ծխել, պայմանաւ որ ծխամորճը ի՛մ հրահանովս վառեմ:

Դահիճը թագաւորին յայտնեց մահապարտելին վերջին փափաքը:

- Շո՛ւտ, գացէ՛ք իր հրահանը ու ծխամորճ մը բերէ՛ք: Թող իր վերջին փափաքը իրականանայ...

Ոստիկան մը վազեց պանդոկ, հրահանը գտաւ եւ զինուորին բերաւ:

Ժողովուրդը լռութեամբ ու համբերութեամբ կը սպասէր, որ մահապարտը իր վերջին ծխամորճը ծխէր: Չինուորը առաւ կախարդական հրահանը եւ զայն երեք անգամ վառեց: Այդ միջոցին, մեզի ծանօթ երեք շուները միասնաբար ներկայացան անոր: Նոյն ատեն զինուորը բացագանչեց.

- Ո՛վ հաւատարիմ շուներս, զիս կախաղանէն ազատեցէ՛ք:

Երեք շուները իրենց ամբողջ ուժով յարձակեցան դատաւորներուն, խորհրդականներուն եւ ոստիկաններուն վրայ: Բոլորը սարսափած փախան: Թագաւորը ստիպուեցաւ մահապատիժի գործադրութիւնը դադարեցնել:

Թագաւորին աչքերը բարկութենէն կարմրեցան եւ թագուհին արցունքները անոր դէմքը ողողեցին: Բայց ժողովուրդը սկսաւ ուրախութեամբ բացագանչել, թէ իշխանուհին պետք է ամուսնանայ այս քաջ ու խելացի զինուորին հետ: Թագաւորն ու թագուհին չէին գիտեր ի՛նչ ընել: Ստիպուած կանչեցին իշխանուհին եւ հարցուցին անոր.

- Այս զինուորին հետ կ'ուզե՞ս ամուսնանալ:

- Եթէ դուք յարմար կը տեսնեք, ինչո՞ւ չէ: Ժողովուրդը վարեն կը շարունակէր աղաղակել.

- Ներեցէ՛ք զինուորին: Ան թո՛ղ մեր ապագայ թագաւորը դառնայ:

Ստիպուած թագաւորը ելաւ եւ ժողովուրդին յայտարարեց.

- Քանի որ այս հրաշքը պատահեցաւ, համաձայն եմ որ այս զինուորը ամուսնանայ իշխանուհիին հետ: Այսօրուրն սկսեալ իշխանուհին պղինձէ դղեակին մէջ պիտի չբնակի, այլ՝ իր ժողովուրդին հետ:

Ամեն մարդ ուրախութեամբ սկսաւ երգել ու պարել:

Թագաւորը շարունակեց.

- Ես արդէն ծերացած եմ: Այսօրուրն սկսեալ այս զինուորը ձեր թագաւորը պիտի ըլլայ:

Այս խօսքէն ետք, թագը հանեց եւ զինուորին գլխուն դրաւ: Ժողովուրդը եօթը օր եօթը գիշեր ուրախութիւն ըրաւ այս հարսանիքին ու թագադրութեան առթիւ:

Այսպիսով վարձատրուեցաւ այդ զինուորը, որ իր հարստութիւնը բաժնեց աղքատներուն եւ պանդոկի տանիքին վրայ քնացաւ...

Եւ այդ օր զինուորին համար դարձաւ կեանքին ամենէն երջանիկ օրը:

(Վերջ)



ԵՐԿԱՐ ՃԱՄԲԱՅ ԴԵՊԻ ՄԵՐ ՍԵՂԱՆԸ



Ժամանակակից իրաքանչիւր մարդու առաւօտը սովորաբար գաւաթ մը տաք բուրաւետ սուրճով կը սկսի:

Սակայն նախքան այդ գաւաթ մը սուրճին մեր սեղանը հասնիլը, անոր հատիկները երկա՛ր ճամբայ մը կը կտրեն հեռաւոր արեւադարձային երկիրներէն:

Աֆրիքայի, Ասիոյ եւ Ամերիկայի մէջ կ'աճին սուրճի մշտադալար ծառեր: Անոնց պտուղներէն կը ստանանք այդ համեղ եւ բուրաւետ ըմպելիքը:

Լեղի համով սուրճին թարմ հատիկները կանաչ եւ դեղին գոյներ կ'ունենան: Բայց կարելի չէ անոնցմէ ուղղակի սուրճ պատրաստել: Նախ այդ պտուղները կը պահուին մինչեւ որ կասիայի (տարչին) գոյն ստանան: Յետոյ սրճադացին մէջ կը դրուին, որպէսզի փոշիանան: Եւ վերջապէս սուրճը կ'եփի հաստ պատերով եւ երկար բռնակով մետաղեայ սրճեփի մը մէջ որոշ քանակով ջուրին մէջ եռացնելով:

Բազմաթիւ երկիրներու մէջ տարածուած է նաեւ լուծուող սուրճը: Անկախ նոյնպէս կը պատրաստուի փոշացած սուրճի հատիկներէն:

Լուծուող սուրճը պայման չէ եռացնել: Բաւարար է միայն գաւաթի մը մէջ լեցնել գայն եւ վրան պաղ կամ եռացած ջուր աւելցնել: Այդ տեսակի ըմպելիքը իր համով բնական սուրճին մօտ է, սակայն նոյնքան զորաւոր բոյր չունի: